Band: Lav Eli
Album: Autumn Raindog
Track: #10. Աշունը (Autumn)

CAPO 3

Em **C**
Կարմրաշեկ այդ ծաղրածուն՝ աշունը,
G **D**
Քշում է իր միականի հեծանիվը,
Em **C**
Ի՞նչ ես ինձ հետ անում,
G **D**
Աշուն, սրիկա աշուն:

Em **C**
Ես ծնվեցի՝ որպես տերև դեղնած
G **D**
Աշնան վերջին օրերն ապրող մի կորացած ծառի
Em **C** **G**
Իր հուշերի հաշվին շնչող ուշակորույս ծառի
D **Em**
Ծառի բեռան տակ անհույս կքած

Տերևների մեջ հին և հնությամբ շնչող
Հին ու հանգած կրքերն են՝ հոգնած քենով
Թունավորում ներկան՝ ներարկելով անցյալը
Ներկելով ներկան անիրական վերքով

Ու սանրվածքներն այս խորթ ու շարժումներն օտար,
Ու հայացքները դատարկ, ոչինչ չասող
Ու գլուխներն այդ՝ հայացքներից դատարկ
Ողնաշարները կոր ու փայտ լսող
Ու կառույցներն այս գորշ, անշունչ, անկիրք
Ու առևտուրն այս բիրտ ու անհեթեթ
Միթե՞ չի մնացել մի գիրկ, մի գիրկ կարգին
Ուր կարելի լիներ նետվել

C G D Em
Որտե՞ղ, որտե՞ղ կորար իմ պատանի լուսե
C G D Em
Իմ աղջնակ փերի, արդյո՞ք որտեղ կորար
C G D Em
Եթե դուք դեռ, դուք դեռ կարող եք ինձ լսել,
C D
Պոկեք ինձ այս Աշնան անգութ գրկից

Em C
Այս կրակները սուտ, ուր ջերմությունը՝ չիք
G D
Ու փորերից ելնող հրճվանքն անասնական
Em C
Այս խնդությունը կեղծ ու սալյուտները սին
G D
Միթե՞ արդեն ոչինչ, արդեն ոչինչ չկա

Լոկ աղջիկներն մոմե, և տղաներն այս՝ բութ
Պիտի ծնեն երթեր՝ մեղկ հորթերի հլու
Պիտի կոկորդ կրծեն մի ոսկորի սիրույն
Հարմար տեղի համար խեղդեն պիտ իրարու

C G D Em
Որտե՞ղ, որտե՞ղ կորար իմ պատանի լուսե
C G D Em
Իմ աղջնակ փերի, արդյո՞ք որտեղ կորար
C G D Em
Եթե դուք դեռ, դուք դեռ կարող եք ինձ լսել,
C D
Պոկեք ինձ այս Աշնան անգութ գրկից

F G Am
Ու՞ր, ու՞ր է գլորվում այս անհեծան անիվը,
F G D
Մի ծեր մայր ու բյուրավոր անհայր որբեր...

Em **C**
Այս հողը՝ երգված, ներկված արյամբ,
G **D** **Em**
Խռոված հողն այս՝ մարմինների մարմին,
C **G**
Սպասում է, երբ պիտի քոչի վերջին
D
Խեղված, տարաբախտ խառնածինը:

Գիտեմ՝ պետք է լինել ուրախ, պիտի երգեր երգել,
Պիտի հրճվել ու գովերգել ներկան,
Որ կենդանի ենք դեռ՝ այս եզերքում խղճուկ,
Որ ուտելու՝ հաց, խմելու՝ ջուր, դեռ կա:

Կարմրաշեկ այս ծաղրածուն՝ Աշունը,
Քշում է իր միականի հեծանիվը,
Ինչ ես ինձ հետ անում,
Աշուն, սրիկա Աշուն...